ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ՄԱԱՇՁԲ-19/1»

ք. Երևան «17» դեկտեմբերի 2019թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ, Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍԹԵՅՋ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Բ. Դիվանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Ամանորյա տոներին նվիրված «Ամանոր 2020» մշակութային միջոցառումների շրջանակներում ձևավորման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **66 702 300 (Վաթսունվեց միլիոն յոթ հարյուր երկու հազար երեք հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև **66 702 300 (Վաթսունվեց միլիոն յոթ հարյուր երկու հազար երեք հարյուր)** ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է **18** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է ***Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչությունը***:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«ՍԹԵՅՋ ՍԹԱՅԼ»
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ք. Երևան, Ե. Թադևոսյան 12/3, բն. 28
Կենտրոնական գանձապետարան	«ԻՆԵԿՈԲԱԿ» ՓԲԸ
ՀՀ 900012410537	ՀՀ 2050622047351001
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 02257568
Է. Կիրակոսյան ----------	Բ. Դիվանյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1

«17» դեկտեմբերի 2019թ. կնքված N ԵՔ-ՄԱԱՇՁԲ-19/1
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							Կատարման	
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	45451100/7	Ամանորյա տոներին նվիրված «Ամանոր 2020» մշակութային միջոցառումների շրջանակում անհրաժեշտ է պատրաստել, մոնտաժել և ապամոնտաժել ներքոշարադրած դեկորացիաները և կոնստրուկցիաները: <<Հեքիաթային քաղաքը>> իր մեջ ներառում է /Հանրապետության Հրապարակի գլխավոր շատրվանների մեջ/. Սեղանաձև թեքահարթակներ և շուրջ 20 քմ հիմնական բեմի լրացումներ: Հիմքը պետք է պատրաստված լինի 25X25 մմ մետաղական խողովակներից: Հատակի ծածկը պետք է լինի 12 մմ հաստությամբ նրբատախտակից ծածկված տպագրության համար նախատեսված սպիտակ պաստառով: Կողային հատվածները պետք է ծածկված լինեն տպագրության համար նախատեսված սպիտակ պաստառով: Թվով 1 հատ ներքին լուսադիոդային լուսավորությամբ աստիճան 10000X600X300 մմ չափի: Հիմքը պետք է պատրաստված լինի 25X25 մմ մետաղական խողովակներից: Հատակի ծածկը պետք է լինի 12 մմ հաստությամբ նրբատախտակից՝ ներկված սպիտակ գույնով: Թվով 2 հատ աստիճան 1200X2000X2400 մմ չափի: Հիմքը պետք է պատրաստված լինի 25X25 մմ մետաղական խողովակներից: Հատակի ծածկը պետք է լինի 12 մմ հաստությամբ նրբատախտակից՝ ներկված սպիտակ գույնով: Թվով 1 հատ կլոր բեմահարթակ D=8500 մմ, H=1200 մմ: Հիմքը պետք է պատրաստված լինի 25X25 մմ մետաղական խողովակներից: Հատակի ծածկը պետք է լինի 10 մմ հաստությամբ նրբատախտակից՝ ծածկված տպագրության համար նախատեսված սպիտակ պաստառով: Կողային հատվածները պետք է ծածկված լինեն սպիտակ ՊՎՀ-ից պատրաստված՝ տարբեր չափերի դեկորատիվ շենքերով: Դեկորատիվ շենքերի առավելագույն բարձրությունը պետք է լինի 1200 մմ, իսկ նվազագույն բարձրությունը՝ 600 մմ: Դեկորատիվ շենքերը պետք է լինեն ներքին լուսադիոդային լուսավորությամբ լուսավորված:	դրամ	66,702,300	66,702,300	1	ք. Երևան, Հանրապետության Հրապարակ և Երևանի հիմնադրման 2750 ամյակին նվիրված շատրվանների պուրակ	14.01.2020թ

		Թվով 1 հատ <<Սատանու անիվ>> կարուսել H=5500 մմ: Կարուսելի հիմքը պետք է պատրաստված լինի 40X40 մմ մետաղական խողովակներից: Կարուսելը պետք է լինի պտտվող մեխանիզմով, երեսպատված ՊՎԽ-ով և լուսադիոդային լուսավորությամբ լուսավորված: Թվով 1 հատ <<Սատանու անիվ>> կարուսել H=4000 մմ: Կարուսելի հիմքը պետք է պատրաստված լինի 40X40 մմ մետաղական խողովակներից: Կարուսելը պետք է լինի պտտվող մեխանիզմով, երեսպատված ՊՎԽ-ով և լուսադիոդային լուսավորությամբ լուսավորված: Թվով 4 հատ բրգաձև դեկորատիվ տոնածառ H=4800 մմ: Տոնածառի հիմքը պետք է պատրաստված լինի 25X25 մմ մետաղական խողովակներից: Տոնածառը պետք է երեսպատված լինի ՊՎԽ-ով և ներկանյութով մշակված: Տոնածառի ստորին հատվածները պետք է ծածկված լինեն ինքնակպչուն ոսկեգույն հայլեանման թաղանթով: Թվով 4 հատ բրգաձև դեկորատիվ տոնածառ H=3500 մմ: Տոնածառի հիմքը պետք է պատրաստված լինի 25X25 մմ մետաղական խողովակներից: Տոնածառը պետք է երեսպատված լինի ՊՎԽ-ով և ներկանյութով մշակված: Տոնածառի ստորին հատվածները պետք է ծածկված լինեն ինքնակպչուն ոսկեգույն հայլեանման թաղանթով: Թվով 18 հատ տարբեր չափերի շենքանման դեկորներ: Դեկորները պետք է պատրաստված լինեն սպիտակ 8 մմ հաստությամբ ՊՎԽ-ից: Դեկորատիվ շենքերի առավելագույն բարձրությունը 2200 մմ, իսկ նվազագույն բարձրությունը՝ 1200 մմ: Դեկորատիվ շենքերը պետք է լինեն ներքին լուսադիոդային լուսավորությամբ լուսավորված: Թվով 2 հատ դեկորատիվ աստղ 5000X5000 մմ չափի: Աստղի հիմքը պետք է պատրաստված լինի 25X25 մմ ներկված մետաղական խողովակներից: Աստղը պետք է լինի լուսադիոդային լուսավորությամբ լուսավորված: Շուրջ 130 գծամետր պարսպանման դեկոր: Դեկորի առավելագույն բարձրությունը պետք է լինի 4500 մմ, իսկ նվազագույն բարձրությունը՝ 1500 մմ: Դեկորի հիմքը պետք է պատրաստված լինի 30X30 և 25X25 մմ մետաղական խողովակներից: Երեսպատումը պետք է լինի դեկորատիվ ոսկեգույն հայլեանման փայլաթիթեղով: Թվով 2 հատ դեկորատիվ եղնիկ պատրաստված պենոպլեքսից: Թվով 15 հատ տարբեր տրամաչափի հայլեանման դեկորատիվ գնդեր՝ առավելագույն տրամագիծը պետք է լինի 4000 մմ, իսկ նվազագույնը՝ 1000 մմ: Դեկորատիվ լուսինի հիմքը պետք է պատրաստված լինի 20X20 մմ մետաղական խողովակներից: Երեսպատումը պետք է լինի 4 մմ հաստությամբ նրբատախտակից, որը պետք է լինի փայլուն կտորով պատված: Դեկորատիվ դուռը պետք է պատրաստված լինի 20X20 մմ մետաղական խողովակներից: Երեսպատումը պետք է լինի մշակված պենոպլաստից և ներկված: Ներքին լուսավորություն չունեցող դեկորացիաները պետք է լինեն						

արտաքին դեկորատիվ լուսատուներով լուսավորված:











Գլխավոր տոնածառի դիմացի հատվածը իր մեջ ներառում է.

Թվով 1 հատ աստիճան 13600X1500X3300 մմ չափի: Հիմքը պետք է պատրաստված լինի 25X25 մմ մետաղական խողովակներից: Հատակի ծածկը պետք է լինի 18 մմ հաստությամբ լամինացված փայլուն նյութից: Ճակատային մասը պետք է երեսպատված լինի 2 մմ հաստությամբ օրգանական ապակով: Աստիճանը պետք է լինի ներքին լուսադիոդային լուսավորությամբ լուսավորված:

Թվով 1 հատ ԼԵԴ Էկրանների համար նախատեսված շարժական կարկաս 5000x3000մմ չափի: Կարկասը պետք է լինի 2 մասից բաղկացած: Հիմքը պետք է պատրաստված լինի 40X40 մմ մետաղական խողովակներից: Կարկասը պետք է լինի անիվների վրա:

Կանգնակներ տպագրությամբ շուրջ 130 քմ՝ աշխատանքային հատվածները քողարկելու համար:

Բեմահարթակի ծածկ սինթետիկ գորգով շուրջ 170 քմ:



		Երևանի 2750 ամյակին նվիրված շատրվանների պուրակի տարածքն իր մեջ ներառում է. Թվով 6 հատ ջահերով կանգնակներ տարբեր չափերի՝ առավելագույն բարձրությունը պետք է լինի 3600մմ, իսկ նվազագույն բարձրությունը՝ 2000մմ: Կանգնակների հիմքը պետք է լինի 40X40 մմ մետաղական խողովակներից՝ փայլուն ոսկեգույն կաշվով երեսպատված: Ջահերի հիմքը պետք է լինեն մետաղական, իսկ երեսպատումը արհեստական բյուրեղներով: Թվով 10 հատ տարբեր տրամաչափի պենոպլաստե գնդեր՝ առավելագույն D=800մմ, իսկ նվազագույն D=300մմ: Գնդերը պետք է լինեն ներկանյութով մշակված: Թվով 6 հատ դեկորատիվ խորանարդաձև նվեր տարբեր չափերի՝ առավելագույնը 2500մմ, իսկ նվազագույնը՝ 500մմ: Հիմքը պետք է լինի 20X20 մմ մետաղական խողովակներից: Խողովակները պետք է լինեն ներկանյութով մշակված: Խորանարդաձև նվերը պետք է ունենա դեկորատիվ <<բանտ>> կտորով երեսպատված, որի եզրագիծը պետք է լինի 6մմ հաստությամբ մետաղական ամրալարով: <<Զմեռ պապու նստավայրի>> բեմահարթակներ և աստիճան: Հիմքը պետք է լինի 25X25 մմ մետաղական խողովակներից, իսկ երեսպատումը 12մմ հաստությամբ նրբատախտակից: Աստիճանը պետք է լինի ներքին լուսավորությամբ լուսավորված: Թվով 1 հատ բազկաթոռ՝ H=1300 մմ, լայնքը՝ 65 մմ : Թվով 1 հատ 800X400X400 մմ չափի թախտ: Թվով 1 հատ 600X400X300 մմ չափի դեկորատիվ փոստարկղ: Թվով 3 հատ մեծ արհեստական տոնածառ: Թվով 60 հատ փոքր արհեստական լույսերով զարդարված տոնածառ: Թվով 10 հատ նվերների դեկորատիվ տուփեր: Թվով 6 հատ դեկորատիվ եղնիկ մետաղական հենքով՝ երեսպատված ինքնակպչուն տպագրությամբ պատված ՊՎԽ-ով: Թվով 1 հատ ետնապատ: Հիմքը 80X40 մմ չորսուներից: Երեսպատումը ՊՎԽ-ից, որի վրա պետք է փակցված լինի ինքնակպչուն տպագրություն: Ետնապատի վերևի հատվածում պետք է լինի թվով 40 հատ լամպ: Թվով 2 հատ մեծ դեկորատիվ բանտ: Թվով 15 հատ արհեստական տոնածառ: Թվով 2 հատ 3600X900X1100 մմ չափի բարի սեղան: Սեղանի հիմքը 60X60մմ մետաղական խողովակներից: Խողովակները պետք է լինեն ներկանյութով մշակված: Սեղանածածկը պետք է լինի 12 մմ հաստությամբ նրբատախտակից: Նրբատախտակը պետք է լինի լաքապատված: Թվով 16 հատ բարի աթոռ: Թվով 40 հատ 800X480 մմ չափի նստատեղ: Նստատեղի հիմքը պետք է լինի փայտե արկղերից: Նստատեղը պետք է լինի 5մմ հաստությամբ սպունգով, կտորը պետք է լինի ջրակայուն:						

		Թվով 10 հատ բարձ 45X45 մմ չափերի: Բարձի կտորը պետք է լինի ջրակայուն: Շուրջ 65 գծամետր դեկորատիվ ճաղավանդակ: Ճաղավանդակը պետք է պատրաստված լինի 50X40 մմ չորսուներից և 10մմ հաստությամբ նրբատախտակից: Ճաղավանդակը պետք է լինի կանաչ գույնի ներկանյութով մշակված: Շուրջ 180քմ տախտակամած և կից աստիճաններ: Տախտակամածի հիմքը 30X30 մմ մետաղական խողովակներից, իսկ երեսպատումը՝ 12 մմ հաստությամբ նրբատախտակից: Նրբատախտակը պետք է լինի լաքապատված: Կանգնակներ տպագրությամբ մետաղական հիմքով շուրջ 400 քմ՝ այգում առկա շինությունները քողարկելու համար: Դեկորատիվ լուսավորություն իրականացում շուրջ 600 գծամետր:						









Պարտադիր պայման՝
Դեկորացիայի արտաքին տեսքը և գույները պետք է համապատասխան լինեն կցված էսքիզային նկարներին և պետք է նախապես համաձայնեցվեն պատվիրատուի հետ:
Դեկորացիայի տեղադրումը և ապամոնտաժումը իրականացվում է մատակարարի կողմից:

		Մոնտաժման աշխատանքները պետք իրականացվեն և ավարտած լինեն ոչ ուշ քան 21.12.2019 թ: Ապամոնտաժումը պետք է իրականացվի 14.01.2020թ:						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410537
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՍԹԵՅՋ ՍԹԱՅԼ»
ք. Երևան, Ե. Թադևոսյան 12/3, բն. 28
«ԻՆԵԿՈԲԱԿ» ՓԲԸ
Հ/Հ 2050622047351001
ՀՎՀՀ 02257568

Բ. Դիվանյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«17» դեկտեմբերի 2019թ. կնքված N ԵՔ-ՄԱԱՇՁԲ-19/1
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի					
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Աշխատանքի անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում		
			նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	45451100/7	Ամանորյա տոներին նվիրված «Ամանոր 2020» մշակութային միջոցառումների շրջանակներում ձևավորման աշխատանքներ		66 702 300	66 702 300

Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410537
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
L.S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՍԹԵՅՋ ՍԹԱՅԼ»
ք. Երևան, Ե. Թադևոսյան 12/3, բն. 28
«ԻՆԵԿՈԲԱԿ» ՓԲԸ
Հ/Հ 2050622047351001
ՀՎՀՀ 02257568

Բ. Դիվանյան ----------
(ստորագրություն)
L.S.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անվանումը Կապալառուի անվանումը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն